

Իրար մօտիկ ընելու տեղ, անոնք իրար կը հրմշտկէին ու գոհ էին ատոր համար: Կարծես անոնց մատներն էին մտածողը անոնց տեղ: Մաթիկ Մելիքխանեան այդ մարդոց կարճ, բայց գէշ մարմինը յաճախակի կը բերէր առաջին գիծի, մոռնալու համար իրը՝ խեղճ ու անհով: «Անտիական» հասակն ալ աննպաստ հանգամանք մըն էր (անիկա յիմար էր եղած չծածկելու իր մօտիկ անցեալը, մանաւանդ ատամնաբուժական ուսանողի անորոշ զբաղումը, վանեցիներուն համար բոլորովին անըմբռնելի, քանի որ սափրիչներուն աքցանը լաւագոյն վկայական մըն էր արդէն) աւելցող իր անփորձութեան, յեղափոխական գործօն աշխատանքէ: Անիծեց, հարիւր անգամ օրը, ուր տուած էր որոշումը սա կիսավայրենի ամբոխին մէջ գործելու: Բայց սահմանէն չանցած՝ ան ի՛նչ եռանդ էր իրը: Իրեն հետ իր մեծերն ալ շուարած էին այդ լերան պէս ամուր հաւատքէն: Ի՛նչ ոգիով ճամբայ էր ինկած: Եւ ո՛ւր էր իջած: Գործօն աշխատանք էր վարանումը, անճարակութիւնը, մանաւանդ ուրիշին խօսք հասկցնելու անհեղինակ իր յուսահատութիւնը կործանեցին անոր «լերան պէս ամուր» հաւատքը մեր ժողովուրդէն: Բայց չէր անդրադառնար, որ անկարող էր շէնք-չնորհ մոսին մը կառավարել: Անիկա անընդունակ էր սաստի, որ զինուորական կարգապահութեան հանգոյցը կը կազմէր: Յիմար իր մօրուքիկին վրայ իր յամառութիւնը պատճառ էր գիշեր ու ցերեկ անոր ծակամուտ կեանքին: Մաթիկ ժուժկալ էր այդ ծակերուն նկարագրութեան մէջ: Դիտմամբ թէ իրականութեան հաւատարիմ մնալու ճիգով մը տուաւ ոչ մէկ կնիկի պատկեր: Ու տարօրինակ էր, որ հանդիպած չըլլար անոր: Եղաւ ժուժկալ բարքերէ, որոնք արդէն անգոյ էին իրեն համար, մշտապէս տարուած ըլլալով յեղափոխական մտախոհանքէն կամ մտախոյանքէն: Միւս կողմէ՝ կուսակցութիւնը կը տանէր շատ ներուժ աշխատանք: Կը պատրաստուէին հարուածող գունդերը ու զօրաւոր ցանց մը մինչեւ Սասուն ու մինչեւ Տէրսիմէն վար, նպատակ ունէր ամուր կռուաններ հաս-